



ԿՐՕՆԵՍԿԵՆ, ՊԵՏՄԵՍԿԵՆ, ԻՆՆԵՍՍԻՐԵՍԿԵՆ, ԵՒ ԻՆԵՐՈՅԵՍԿԵՆ.

ԹԻՒ Ա. — ՇՐՋԱՆ Ե. — ՏԵՐԻ Գ. 1872 ՅՈՒՆՎԵՐ 31.

1872 ՆՈՐ ԹՈՒՂԱԿԱՆ
ԵՒ
Ե. ՇՐՋԱՆ

Արարատ ամազգրոյս.

Չիք որ Յեսու՛ որ կարողանայ արեգա-
կան հրամայել:

Ղուսինն և ամեն մողորակք անդադար
կրողրեն իւրեանց շրջանքը:

Տարեքք միշտ պատրաստ են և հպա-
տակ կատարել Աստուածային պատուի-
րանքը և հրամանքը:

Ի մի բան իսկ ասել, համայն արարածք՝
ըստ իւրաքանչիւր տեսակի՝ վիճակի և զը-
րութեան՝ հաւատարիմ՝ պաշտօնակատար
կը հանդիսանան ամենաբարի կամաց Արար-
չին տիեզերաց:

Ո՛չ ապաքէն և մարդս գողով Արարչին
Աստուծոյ գեղեցիկ՝ նախամեծար և փա-
ռաւոր արարածոց մին՝ նա ևս կը կրէ պար-
տաւորութիւնք, ո՛չ ապաքէն նա ևս ունի

սահման և շրջաններ, յորս ծնանի, ծաղ-
կի, ուռձանայ, արմատանայ, ծերանայ, և
ի սերունդս անմահանայ:

Մարդկան կենաց որքանութեան սահ-
մանքը կը չափուին յընթացս արեգական և
լուսնի, և թիւք աւուրց՝ շաբաթուց՝ ամ-
սոց և ամաց, խտիրներ կրտեսնուին մարդ-
կան կենաց շրջանի մէջ, ոմանք վաղաթա-
ռամ կը փութան ի յաւիտենականու-
թիւն, ոմանք փորձ՝ հմուտ կենցաղավա-
րութեամբ զալիս ծերութեան կը վայելեն,
այլք այսպէս կամ այնպէս կը կնքեն այս
անցաւոր կենցաղոյս ընթացքը իւրեանց
աշխոյժ երիտասարդական հասակաց մէջ:

Եթէ արեգակն, լուսին, տարեքք և բը-
նութիւն համայն կպարտին և կը ծառա-
յեն իւրեանց սահմանեալ վիճակաց մէջ
յօգուտ և ի բարիս տիեզերաց, զի՛նչ և
քանի՛ առաւել ապա մարդիկ պարտըն-
կալ են իւրաքանչիւր աստիճանի և վիճա-
կի մէջ յաւէտ գործել և փայլել ի բարիս:

Իայց բարիք ասելով չէ պարտ իմանալ
անհատական անձանց առ ինքեանս և եթ

քաղելիք բարիքը, — ոչ երբէք: Մարդիկ ընկերական են, և այս և այն սերնդովք յօրինած են և կ'յօրինեն միշտ զանազան ազգ, ընտանիք և ընկերութիւնք. անշուշտ բնական է իւրաքանչիւր ընտանեաց՝ կամ ընկերութեանց և կամ ազգաց աշխատիլ և ջանալ առաւել յօգուտ իւրեանց: Ուրեմն շայկազուն ազգը ևս ունի իւր մասնաւոր բաժնին մէջ անհրաժեշտ պարտիք:

Արդարև շայք առաւել պարտին իւրեանց ազգային մարդկութեան կամ ընկերութեան նպաստել և օգնել, ծառայել միմեանց օգտին, նկատելով իւրեանց ցրուեալ և թշուառ դրութիւնքը:

Աստ մեծամեծ ազգք և ազնիք կը տարբերին ցեղական դրութեամբք շայ ազգութեան մասնաւորութեանէն. սակայն ո՞վ կարգելու արեւու և լուսնի և այլոց ազգեցութեանց շրջանները նաև շայութեան կենաց վերայ, որ ի թիւսնոցա ահաւասիկ ժառանգեց ներկայ 1872 թուականը, որով և մեր ազգը յաւելացոյց մի թուական իւր կենաց վերայ:

Մեր խնդիրը չպիտի լինի այն՝ թէ շայ ազգի կենաց մի շրջան ևս յաւելացաւ կամ պակասեցաւ, այլ թէ՛ զինձիգ անցաւ, որպիսի՞ արդեամբք:

Եթէ իւրաքանչիւր ազգի բարի գերագանցութիւնք և յառաջադիմութիւնք կապացուցանվին իւրեանց բարոյական և մտաւորական յատկութեամբքն, ապա և մերն անտարակոյս պարտի այնպէս լինել, բարոյական և մտաւորական յատկութեամբք միայն կարեմք երաշխաւորել մեր ակնկալած յառաջադիմութիւնը և նոր կենդանութեան հասանել, ևս փառաւոր կա-

ցուցանել Ազգը և Եկեղեցին առաջի մերայնոց և օտարաց:

Գոհ եմք, որ Ազգիս մէջ հետզհետէ մտաւորական և բարոյական յառաջադիմութեանց զարգանալոյ ի մասին ապահով լինելոյ համար բաւականին նշանաբաններ կը նկատեմք. և ո՞ք են արդեօք նոքա:

— Աստուծոմարանք և լրագիրք, արհեստազիտութիւնք և վաճառականութիւնք:

Արհեստազիտութիւն և վաճառականութիւն նոր չեն մեր ազգի համար: Միայն այժմ առաւել կը յաճախեն ազգայինք մեր ինոսին և ժամանակիս համեմատ կը զարգանան, որ անտարակոյս ընդ նիւթականին նաև բարոյական մեծամեծ օգուտներ կը ծնանին Ազգի համար:

Իսկ կրկնասեռ ուսումնարանք և լրագիրք, — որք մտաւորական և բարոյական զարգացմանց և յառաջադիմութեանց առաջին և զլսաւոր միջոցներն են և նշաններն, — ամենայն կողմ մեծ եռանդեամբք կողջունուին և կրնդ հանրանան:

Ի՞նչպէտ տակաւին հազուադիւրտ են կարգաւորեալ և արժանաւոր կրկնասեռ ուսումնարանք մեր մէջ, սակայն կը մխիթարվեմք և կը յուսամք իսկ՝ զի միանգամ ուսումնարանաց վերայ սէր և եռանդներ ընդհանրանալէն զինի հասարակութեան մէջ, այնուհետև հեշտ է ձշմարիտ ազգասիրաց գործակցութեամբք և եկեղեցոյ պաշտօնէից փոյթեռանդն ջանիք՝ բարեկարգել և արդիւնաւորել զնոսա:

Անշուշտ ամենայն բարի նպատակներ և ձեռնարկութիւնք ի սկզբան խոչնդոտներու կը հանդիպին, և այս զրեթէ սովորական պէտք է համարել՝ ցորչափ մարդիկ պատրաստուած և ուսեալ չեն որ և իցէ

բարի նպատակաց՝ կամ սկզբանց և ձեռնարկութեանց համար: Սակայն հարկէ անյողողղբ և անվեհեր յարատեւել, և ամենայն ձիգ թափելով ուշիմամիտ և շրջանկատ հեռատեսութեամբք ջանալ ուսման յարգը և պիտանութիւնը քարոզել հասարակութեան և տակաւ առ տակաւ կամ փութով յառաջ տանել՝ նայելով ժողովրդեան ընդունակութեան և կարողութեան:

Այժմ ըստ մեծի մասին ազգայինք մեր ընդ ամեն երկիր լաւ ձանաչեցին մեր փրկութեան և յառաջադիմութեան միջոցները, որ յիմայն արուեստաց և իգականաց պիտանի և հոգևոր սոսո-ճարաններն են: Ուրեմն պէտք է ամենայն ձիգ ի գործ արկանել՝ և յորդորել ժողովուրդը՝ բազմացնել ուսումնարանաց թիւը, և բարեկարգել և արդիւնաւորել զնոսա, որպէս զեմանկունք ազգիս ազգային լեզուի և կրօնի գիտութիւնք և դաստիարակութիւնք ուսանին, կենցաղավարութեան համար լեզուներ և այլ կարեոր առարկաներ գիտենան, և միանգամայն ազգի և եկեղեցւոյ հարազատ և անձնանուէր որդիք լինին: Արպիտեօք անշուշտ մեզ կը բացուի յառաջադիմութեան և ապառնի երջանիկ կենաց ճշմարիտ և փրկարար ուղին:

Գալով լրագրաց, նոյնպէս կը մխիթարուիմք հետզհետէ նոցա թուոյն յաւելանալոյն համար, որք կը նշանակին թէ՛ ընթերցասիրութիւնը կընդհանրանայ, և ժողովուրդը իղձ ունի մտաւորական և բարոյական օգուտներ քաղել լրագիրներէն: Թէպէտ պէտք է ճշմարիտը խոստովանել, զի դեռ շատ հաղուազիւ տ են կանոնաւոր և ազգիս իրական կարօտութեանց քարոզ

լրագիրներ, քանզի բազումք լոկ անձնական և անօգուտ կրից արձագանքներ են, որով փոխանակ իրախուսելոյ և շարժելոյ զժողովուրդն յընթերցասիրութիւն և յուսումնասիրութիւն՝ բազմիցս զուանք պատճառած են, որք անշուշտ տղիտութեան կամ անհեռատեսութեան և կամ նիւթոյ պահասութեանց արդիւնքներ կը համարուին: Այսու ամենայնիւ՝ չէ կարելի ուրանալ զե կանոնաւոր և անաչառ լրագիրք բաւական ծառայութիւնք մատուցին և կը մատուցանեն Ազգի և Ակեղեցւոյ, ժողովուրդը արթնցողին, ուսումնարանաց բացմանց ուսմանց և գիտութեանց ծաւալմանց յորդորող հանդիսացան, ժողովրդեան ուսուցին իւր իրաւունքները և պարտքերը, և յառաջադիմութեան և փրկութեան միջոցները և հնարները: Յուսով եմք՝ զի ընթերցասիրութեան և ուսումնասիրութեան ծաւալումն և ընդհանրանալն կը պահանջէ և կունենայ բազմութիւ և աւելի կանոնաւոր լրագիրներ, որք ազգի կարօտութեանց իրական և անընդմիջական դարմանոց խնդիրներով կը բազուին, և առանց համեմատելոյ այս և այն երեւելի ազգերը՝ երեւակայական խնդիրներ չեն յուղուիլ, և անձնական կրից և զուր վիճարանութեանց ասպարէզներ կը պակասին:

Արդ կիմացուի համառօտ տեսութենէս թէ՛ անցեալ թուականն և սբաւական արդիւնք թողած է ՄԱզգիս, թէպէտ դառն և ասելի դէպքեր և ս պատահած են ինմին:

Ուստի կը մնայ Ազգիս ներկայիս միջշարունակել այն ջանքերը և արդիւնքները՝ որք Ազգի և Ակեղեցւոյ պայծառութեան և յառաջադիմութեան անհրաժեշտ պիտոյքն և միջոցքն են, կարձել՝

անհետացնել և հեռանալ այնպիսի խրն-
զիրներ յուզելէն՝ որք « Բաժանեալ զե տի-
րեցես, » կը մեկնուին, որոց վախճանը ազ-
գիս ազետաբեր է և կորստեան վիհեր կը
պատրաստէ:

Յիրաւի Ազգիս պիտոյքը և կարօտու-
թիւնքը բաղմատեսակ են, բայց մեք զբլ-
խաւորները յիշեցինք, որոց համար ամեն
ջանք և հնարք ի գործ դնել պէտք է, որ-
պէս զի նոքօք անհետանան մնացեալ կա-
րօտութիւնք և լրանան իղձք, որք եթէ
ի վաղուց ունենալով բաւական հմուտ՝
զիտնական՝ փորձեալ և անձնանու՝
զեցական պաշտօնեայք՝ ի կիր արկասէրս,
այժմ շատ մեծ օգուտները կը վայելէինք
և կը մխիթարուէինք. վասն որոյ ամեն բա-
նէ յառաջ և զխաւորապէս պէտք է նոցա
համար հոգալ և Արկեղեցւոյ և Ազգիս
համար ընտիր պաշտօնեայք պատրաստել,
ըստ որում հմուտ և եռանդուն մի զօրա-
պետ կարող է կրթել և պատրաստել քաջ
և ընտիր զօրականք, թէև զօրապետը զօ-
րականաց ի միջոյ կընտրուի:

Ուրեմն սոյնպիսի բարի զգացմամբք և
խորհրդածութեամբք կշռեալ Ազգայինք
մեր սիրելիք իւրեանց նպատակները և
գործերը՝ մուտ գործել ի ներկայ 1872
թուական՝ կը շնորհաւորէ և կը բարեմաղ-
թէ Արարատ Ամսագիրս Մայր Աթոռոյ
մերոյ, ինչպէս և ազգայինք շնորհաւորե-
լով ամսագրոյս Ա. շրջանը՝ — որոյ առաջին
թիւն է ներկայ ամսագիրս՝ — սիրով և հա-
մակրութեամբք պիտի ողջունենք Արարատ:

Յայտնի է արդէն սիրելի Ազգայնոց՝ զե
այսուհետև Արարատ ամսագրոյս տարե-
գլուխն կսկսանի Յունվար ամիսէն: Պիտի
հրատարակուի ամեն ամիս հինգ թերթով

և Հայաստանի աւերակաց՝ քաղաքաց՝
վանօրէից տեսարանօք զարդարուած և լին.
և տարեկան զինն մի և նոյն Ա ուրբի է ի
Ռուսաստան և Յ արծ. մէջիտ. ի Տաճ-
կաստան հանդերձ ծախուքն ճանապարհի:

Նաև կամելով ազգիս ուսումնականաց
յորդոր՝ միջոց և խրախոյս տալ՝ որով
զրականութեան հետ նաև գաստխարա-
կութեան խնդիրը զարգացնել, Արարատայ
Խմբագրութիւնը պատրաստ է վար-
ձատրել Ազգ. հեղինակները միայն Բանա-
« իրական » յօդուածոց մէջ:

Գաստխարակութեան — այսինքն է ման-
կավարժութեան, դասուց, դասատուու-
թեանց, դասագրոց որպիսութեանց և
եղանակաց վերայ եղած, — անտեսագի-
տութեան և այլ ուսումնական զիտելեաց
և տեսութեանց վերաբերեալ նոր հեղի-
նակած Յօդուածոց՝ 10 աստիճան (այս)
տառով և ամսագրոյս զրութեամբ (ութն
երես) իւրաքանչիւր թերթի համար ՏԱՍՆ
ուրբիէն մինչև ՏԱՍՆ եՒ ՀԻՆԳ ուրբի, իսկ
թարգմանեալ Յօդուածոց համար ՀԻՆԳ
ուրբիէն մինչև ՏԱՍՆ ուրբի վարձատրու-
թիւնք կլինին:

Չկնի հրատարակութեանց Խմբագրու-
թեան հաւանած և ընտրած Յօդուածոց՝
արժան եղած և որոշուած վարձատրու-
թեանց գումարները կընդունին հեղինակք
և թարգմանիչք:

Իսկ չընդունուած Յօդուածները՝ ըստ
պատկանելոցն կը վերադարձունէ Խմբա-
գրութիւնս:

